

Հողվածի պատրաստման չափորոշիչներ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
ՍԵՊՏԵՄԲԵՐ 30, 2022Թ
ՀՀ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1. Հողվածները ներկայացնել Word միջավայրում՝ ձևակերպված հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներից որևէ մեկով:
2. Թուղթը՝ A4 ֆորմատ, գրքային:
3. Լուսանցքները՝ վերևից, աջից, ձախից՝ 4 սմ, ներքևից 5 սմ:
4. Տառաչափը՝ 12pt:
5. Տառատեսակը՝ հայերենի դեպքում՝ Sylfean, անգլերենի, ռուսերենի դեպքում՝ Times New Roman:
6. Միջտողային հեռավորությունը՝ 1pt:
7. Աշխատանքի վերնագիրը՝ բնագրի լեզվով, գլխատառերով, երկրորդ տողում, հավասարեցումը կենտրոնից, թավ:
8. Հեղինակի (հեղինակների) ազգանունը, անվան ու հայրանվան առաջին տառերը՝ բնագրի լեզվով, երրորդ տողում, հավասարեցումը կենտրոնից, թավ:
9. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հակիրճ բնութագիրը բնագրի լեզվով, հավասարեցումը երկկողմանի, ուղիղ:
10. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հանգուցային բառերը բնագրի լեզվով՝ մինչև 10 բառ, հավասարեցումը երկկողմանի, ուղիղ :
11. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել 8-11 կետերի տեղեկատվությունը ռուսերեն ու անգլերեն, եթե բնագրի լեզուն հայերենն է, հայերեն ու ռուսերեն, եթե բնագրի լեզուն անգլերենն է, հայերեն ու անգլերեն, եթե բնագրի լեզուն ռուսերենն է:
12. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել նախաբանը՝ հողվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում և արդիականության հիմնավորում (1 էջը չգերազանցող) :
13. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել հողվածի հիմնական բովանդակությունը:
14. Հղումները տեքստում ներկայացնել քառակուսի փակագծերի մեջ՝ նշելով տվյալ աշխատանքի համարը գրականության ցանկից:
15. Բանաձևային արտահայտությունները հարկավոր է իրականացնել *Math Type* կամ *MS Equation* բանաձևային խմբագրերի միջոցով: Համարակալվում են միայն այն բանաձևերը, որոնց ուղղված հղում կա տեքստում: Բանաձևերի համարակալումը հարկավոր է կատարել ըստ ամբողջ տեքստի (1), (2), ..., հավասարեցումը՝ կենտրոնացված, համարակալումը՝ աջից: Բոլոր համարակալումները պետք է դասավորված լինեն մինևտյն ուղղաձիգի վրա: Բանաձևերում կիրառվող բոլոր նշանակումները հարկավոր է պարզաբանել: Մեծությունները չափողականությունները պետք է համապատասխանեն СИ համակարգին:
16. Աղյուսակները պետք է վերնագրվեն և համարակալվեն:
17. Գրաֆիկական նյութը և նկարները՝ միայն սև-սպիտակ երանգավորմամբ, հստակ, վերնագրված և համարակալված, չպահանջի լրացուցիչ խմբագրում,: Այն հարկավոր է ներկայացնել jpeg կամ tiff ֆորմատներով (300dpi-ից ոչ պակաս):
18. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել եզրահանգում (0,5 էջը չգերազանցող)՝ ներառելով աշխատանքում ստացված հիմնական արդյունքները:
19. Գրականության ցանկի տարրերը պետք է ներկայացնել ըստ ներքոնշյալ օրինակների.

Գրքերի օրինակներ.

1. Աղայան Է. Բ. Ընդհանուր և հայկական բառագիտություն: Երևան: ԵՊՀ հրատարակչություն: 1984: 370 էջ:
2. Будаг Б. М., Фомин С. В. Кратные интегралы и ряды. М.: Изд.-во «Наука». 1967. 608 с.
3. Nowacki W. Theory of Asymmetric Elasticity. Oxford. Pergamon Press. 1986. 383 p.

Ամսագրերի/պարբերականների օրինակներ.

1. Ջրբաշյան Վ. Ա. Ռիսսի տիպի ներկայացումներ կիսահարթությունում մինիմալության հատկությամբ// Մաթեմատիկան բարձրագույն դպրոցում: 2011: Հատոր 7: № 1: էջ 5-17:
2. Пальмов В. А. Основные уравнения теории несимметричной упругости // Прикладная математика и механика. 1964. Т. 28. Вып. 6. С. 1117-1120.
3. Iesen D. The plane micropolar strain of orthotropic elastic solids // Archives of Mechanics. 1973. Vol. 5. № 3. P. 547-561.

Ժողովածուի օրինակներ.

1. Խաչատրյան Ն. Գ., Հարությունյան Ս. Ն. Հայերի մշակութային արժեքային կոդֆորմացիաների միջմշակութային ուսումնասիրություն // Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան: «Էդիտ Պրինտ» հրատ.: 2011: էջ 80-83:
2. Маргарян Л. М. Построение прикладной динамической модели микрополярных упругих ортотропных тонких стержней асимптотическим методом // Труды международной конференции “Актуальные проблемы механики сплошной среды”. 08-12 октября. 2012. Цахкадзор, Армения. Т. 2. Ереван: Изд.-во ЕГУ АС. 2012. С. 19-23.
3. Kolesnikov A. M., Popov A. V. Pure bending of a pressurized curved tube // Proceedings of the International Conference Shell Structures: Theory and applications. 16-18 October, 2013. Gdansk, Poland. Taylor&Francis Press. London. 2014. P. 113-116.
20. Հողվածի ծավալը չպետք է գերազանցի 10 էջը: Բոլոր էջերը պետք է համարակալվեն ներքևից՝ կենտրոնում:
21. Առանձին փաստաթղթով («տվյալներ հեղինակի մասին»), հողվածի լեզվով հարկավոր է ներկայացնել սպառիչ տեղեկություններ հեղինակի (հեղինակների) մասին՝ նշելով անուն, ազգանուն, հայրանուն (լիովին), աշխատավայր, գիտական աստիճան, կոչում, հեռախոս, էլեկտրոնային հասցե (e-mail):
22. Հողվածները հարկավոր է ուղարկել sss@shsu.am էլեկտրոնային հասցեներին: